

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/5

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Ոսկե Գետնափ» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 09.06.2015 թ-ի թիվ 6108171 ակտի դեմ:

**«Ոսկե Գետնափ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 25.05.2015թ. թիվ 6108171 հանձնարարագրի համաձայն՝ «Ոսկե Գետնափ» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Մամիկոնյանց 2 հասցեում գործող խանութում 25.05.2015թ-ին «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրականացվել է հսկիչ նշանների /դրոշմապիտակների/ կիրառման ճշտության ստուգում: Մասնավորապես, խանութից գնվել է երկու հատ ԱՏ ԳԱԱ 210500 ծածկագրին դասվող պաղպաղակ /մեկ հատ «Կապուչինո բաժակ» տեսակի արտադրված 28.04.2015թ-ին «Աշտարակ կաթ» ՍՊԸ-ի կողմից, վաճառքի գինը 90 դրամ և մեկ հատ «20 Կոպեկ» տեսակի արտադրված «Թամարա» ՍՊԸ-ի կողմից, վաճառքի գինը 90 դրամ/, որոնց վրա առկա չեն եղել դրոշմապիտակներ:

Ստուգմամբ պարզվել է, որ «Ոսկե Գետնափ» ՍՊԸ-ն խախտել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածը, որի համաձայն ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ-ի աշխատակիցների կողմից 09.06.2015թ. կազմվել է թիվ 6108171 ակտը: Ակտը ընկերությունը չի ընդունել, ինչի վերաբերյալ առարկություն է ներկայացվել ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչություն:

Խնդիրն այն է, որ տնտեսական գործունեության ժամանակ վերը նշված պաղպաղակները խանութ ընդունվել են պատշաճ դրոշմապիտակավորված և դասավորվել են սառնարանի մեջ: Պաղպաղակները սառցարանում, շփվելուց և սառչելուց դրոշմապիտակները պոկվել են ու թափվել սառնարանի մեջ, ինչու էլ ընկերության մեղավորությունը չկա: Իսկ այն փաստը, որ դրոշմապիտակներն իրոք գտնվել են սառնարանի մեջ ընկերության աշխատակիցները նկարահանել են նույն օրը ստուգման ժամանակ /կից նկարները/, այդ հանգամանքը տեսանելի է եղել նաև ստուգումն իրականացնող հարկային տեսչության աշխատակիցներին, սակայն վերջիններս այդ փաստի վրա ուշադրություն չեն դարձրել, այն չեն արձանագրել, քանզի համապատասխան ստուգում իրականացնելու դեպքում կարող էին հստակ պարզել, թե քանի պաղպաղակի վրայից է դրոշմապիտակը պոկվել, որը արդյունք է ջերմաստիճանի փոփոխման, և արդյոք սառնարանում առկա դրոշմապիտակների քանակին համապատասխան չդրոշմապիտակավորված պաղպաղակներ կան: Այսինքն՝ հարկային տեսչության աշխատակիցներն իրականացրել են ոչ օրենքին համապատասխան, պահանջվող նորմերին համահունչ ստուգում, այլ պարզապես արձանագրել են այնպիսի խախտում, ինչպիսին հաճ է եղել իրենց: Արդյունքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 8-րդ հոդվածների պահանջները, որի արդյունքում կազմվել է ոչ իրավաչափ վարչական ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով ընկերությունը խնդրում է չեղյալ համարել Արաբկիրի ՀՏ 09.06.2015 թ-ի թիվ 6108171 ակտը:

**ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 25.05.2015թ.-ի թիվ 6108171 հանձնարարագրի համաձայն «Ոսկե Գետնափ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 09.06.2015 թ-ի թիվ 6108171 ակտը (այսուհետ նաև Ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 25.05.2015թ.-ի թիվ 6108171 հանձնարարագրի համաձայն «Ոսկե Գետնափ» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Մամիկոնյանց 2 հասցեում գործող խանութում 25.05.2015թ.-ին իրականացվել է հսկիչ նշանների(դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում՝ գնվել է երկու հատ ԱՏ ԳԱԱ 210500 ծածկագրին դասվող պաղպաղակներ մեկ հատ «Կապուչինո բաժակ» տեսակի արտադրված 28.04.2015թ-ին «Աշտարակ կաթ» ՍՊԸ-ի կողմից, վաճառքի գինը 90 դրամ և մեկ հատ «20 Կոպեկ» տեսակի արտադրված «Թամարա» ՍՊԸ-ի կողմից, վաճառքի գինը 90 դրամ, որոնց վրա առկա չեն եղել դրոշմապիտակներ: Վաճառողի կողմից գումարը մուտքագրվել ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ստուգմամբ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջները:

Նիստին ներկա գտնվող ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, որ ստուգման ընթացքում գնված թվով երկու հատ պաղպաղակների վրա դրոշմապիտակների բացակայությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ սառնարանում գտնվելու ընթացքում՝ կապված ջերմաստիճանի նվազման հետ, դրանց վրա փակցված դրոշմապիտակները պոկվել են: Ընդ որում սառնարանում, որտեղից որ վաճառվել են ակտում հիշատակված թվով երկու պաղպաղակները, առկա են եղել նույն տեսակի պաղպաղակներ, որոնք դրոշմապիտակավորված են եղել:

Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ յուրաքանչյուր անգամ պաղպաղակ ստանալիս մեկ առ մեկ ստուգվում են պաղպաղակների վրա դրոշմապիտակների առկայությունը և երբևէ չի արձանագրվել չդրոշմապիտակավորված պաղպաղակների ընդունման որևէ փաստ:

Հանձնաժողովի անդամները նշեցին, որ այլ տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ փաստեր, երբ պաղպաղակները սառնարանում գտնվելու հետևանքով դրանց վրա փակցված դրոշմապիտակները պոկվել են:

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե խախտումն արձանագրելու պահին ստուգվել է արդյոք տվյալ սառնարանում պոկված դրոշմապիտակների առկայությունը, հնչեց բացասական պատասխան:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույրի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, որի համաձայն վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ, ըստ էության, Ակտով արձանագրված խախտման մեջ բացակայում է ընկերության պաշտոնատար անձանց մեղքը: Այսինքն, Ակտով արձանագրված խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 09.06.2015 թ-ի թիվ 6108171 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

